ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 հունվարի ուրբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

4
(3035)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՍՈՑԱՊ ՆԱԽԱՐԱՐԸ ՍԽԱԼՆԵՐՈՎ ՀՐԱՎԵՐ Է ՈՒՂԱՐԿԵԼ. ՏԱՌԱՑԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ազգային ժողովում եւ Կառավարությունում տառացի անգրագիտության եւ փնթիության խայտառակ դրսեւորումներ են նկատվում: «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքի տակ է հայտնվել փաստաթուղթ, որը Կառավարությունից Ազգային ժողով է հասել պաշտոնների եւ պաշտոնյաների մասին սխալներով:

Այսպիսով, «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ օրերս ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի անունից ՀՀ Ազգային ժողով է հասել մի գրություն, որով նախարարը ԱԺ 3 հանձնաժողովների ղեկավարներին հրավիրում է միջոցառման: Փաստաթղթում նշված է, որ հրավիրվում են «Աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանը, Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Լուսինե Բադալյանը, Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ռուստամ Բաքոյանը»:

Նկատենք, որ 3 հանձնաժողովներից միայն 1-ի՝ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնն ու անուններն են ճիշտ գրված: Բանն այն է, որ դեռ նախորդ տարվա դեկտեմբերի 6-ին մամուլը գրեց, որ ՀՀ ԱԺ պատգամավոր Լուսինե Բադալյանը հրաժարվել է ԱԺ Առողջապահության հանձնաժողովի փոխնախագահի պաշտոնը զբաղեցնելուց այն բանից հետո, երբ Նարեկ Ջեյնալյանը անարդար պահանջով հրաժարվեց պատգամավորի իր մանդատից: Այսինքն՝ նրա հրաժարականից հետո այս պահին հանձնաժողովը փաստացի անկառավարելի է, քանի որ դեռ նախագահի նոր ընտրություններն էլ չեն եղել: «Ժողովուրդ» օրաթերթը հրապարակել է այս մասին դեռ դեկտեմբերի 12-ին:

Իսկ ինչ վերաբերում է Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահին, ապա երբ Թագուհի Թովմասյանին ՔՊ-ն քաղաքական ապօրինություններով հեռացրեց պաշտոնից, այդ հանձնաժողովը մնաց առանց նախագահի եւ այդպես է մինչ օրս: Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարում է նախագահի տեղակալ Ռուստամ Բաքոյանը, սակայն սոցապ նախարարությունից Բաքոյանին ներկայացրել են որպես հանձնաժողովի նախագահ:

Բայց սա չէ ողջ զավեշտը: Խնդիրն այն է, որ պաշտոններն ու պաշտոնյաների մասին սխալ տեղեկություններով գրված այս փաստաթուղթը ԱԺ աշխատակազմի ղեկավար, գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանը ընդունել է: Բավական չէ, որ ընդունել է, դեռ ավելին՝ վերահասցեագրել է նշված անձանց: Սա այն ամենն է, ինչ պետք է իմանալ ԱԺ աշխատակազմի ղեկավար Առաքելյանի փաստացի դրսեւորված ոչ կոմպետենտության, ոչ պրոֆեսիոնալիզմի եւ անգրագիտության մասին:

ԵԱՀԿ ՄԽ-ն չպետք է լուծարվի. դա ՀՀ իշխանությունների լիազորությունների մեջ չի մտնում: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց Արցախի Հանրապետության վտարանդի խորհրդարանի պատգամավորը: Հունվարի 9-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ֆեյսբուքյան իր էջում 12 առաջարկ էր ներկայացրել Բաքվին, որոնցից մեկով առաջարկում էր լուծարել ԵԱՀԿ Մինսկի խումբը: Փաստորեն, այս հարցում եւս Նիկոլ Փաշինյանն ու Ալիեւը համախոհներ են: Ադրբեջանի նախագահն էլ է պահանջում, որ խաղաղության պայմանագրի ստորագրման համար Հայաստանը համաձայնություն տա ԵԱՀԿ Մինսկի խմբի լուծարման առաջարկին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախի ԱԺ խմբակցություններն այսօր ՀՀ-ում Արցախի ներկայացուցչությունում հանդիպում-քննարկում են նախաձեռնել: Արցախի խորհրդարանը նոր հայտարարություն է մշակում, որով անընդունելի են համարելու ԵԱՀԿ ՄԽ-ն լուծարելու Փաշինյանի մտադրությունը: Արցախի ԱԺ «Արդարություն» խմբակցության ղեկավար Դավիթ Գալստյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշեց՝ Փաշինյանի անհեթեթությունն անարձագանք չի մնալու, առաջիկա օրերին հայտարարությամբ հանդես կգանք: Իսկ ինչ եւ ինչի համար է ԵԱՀԿ Մինսկի խումբը. այս կառույցը 1992 թվականին Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կոնֆերանսի (ԵԱՀԽ) կողմից ստեղծվեց, որն այժմ Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունն է (ԵԱՀԿ): Այն կոչված է Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հակամարտության խաղաղ, բանակցային լուծման տարբերակներ գտնելուն: ԵԱՀԿ ՄԽ-ն բաղկացած է 9 անդամներից՝ Բելառուս, Գերմանիա, Իտալիա, Շվեդիա, Ֆինլանդիա եւ Թուրքիա, Հայաստան եւ Ադրբեջան, ինչպես նաեւ համանախագահող եռյակ անդամ երկրներից՝ Ռուսաստան, Ֆրանսիա եւ ԱՄՆ: Թեեւ Ադրբեջանը հիմա պահանջում է լուծարել այս կառույցը, իսկ Հայաստանն էլ ամենեւին դեմ չէ սրան, բայց այս կառույցը ֆորմալ առումով դեռ գործում է:

ԵԱՏՄ-ն ոսկոր է դարձել իշխանության եւ իշխանամերձ օղակների համար: Նախ՝ Փաշինյանը քովիդի պատճառով չմասնակցեց դեկտեմբերի 25-ին Սանկտ Պետերբուրգում կայանալիք ԱՊՀ ոչ պաշտոնական գագաթնաժողովին, ապա՝ Հայաստանի եւ Բելառուսի առաջնորդները վիճաբանեցին ԵԱՏՄ գագաթնաժողովի ժամանակ Նիկոլ Փաշինյանի կողմից արված այն հայտարարության պատճառով, թե հայկական պատվիրակությունը հաջորդ տարվա մայիսին Մինսկում կայանալիք Եվրասիական բարձրագույն տնտեսական խորհրդի նիստին կմասնակցի հեռավար տարբերակով: Եվրամիությանն անդամակցության գործընթացի մեկնարկին հավանություն տված կառավարությունից հայտնում են, որ Եվրասիական տնտեսական միությունից դուրս գալու օրակարգ այս պահին չկա, սակայն տնտեսվարողներն ու գործարարները տագնապի մեջ են: Բանն այն է, որ 2024 թվականին ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Էդուարդ Հակոբյանի հավաստմամբ՝ ԵԱՏՄ մաքսային բյուջե 76.2 մլրդ դրամի մուտք է եղել: Այն 2023-ի համեմատ աճել է 1.2%-ով: Կարելի է արդյոք ենթադրել, որ ԵԱՏՄ-ից դուրս գալու թեզերը, պետական բյուջեի հարկերն ավելացնելուն զուգահեռ, նպատակ ունեն այսուհետեւ ֆինանսական որեւէ ներդրում չանել ԵԱՏՄ-ում: Հարկ է նշել, որ ՀՀ պետական բյուջեի 609 մլրդ դեֆիցիտին օդ ու ջրի պես անհրաժեշտ են անհիմն ծախսվող միլիարդները: Ու հիմա Կառավարությունում մտածում են՝ ծրագրերը չկատարեն, որ գումար խնայեն: Ի դեպ, չի բացառվում՝ դեֆիցիտը 609 մլրդ դրամից էլ ավելի լինի:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ 2020 թվականին՝ քովիդի շրջանում, ենթադրյալ չարաշահումների գործով հակակոռուպցիոն դատարանում քննվող գործի մեղադրյալները հույսը դրել են ՔՊ պատգամավոր Արսեն Թորոսյանի վրա: Մասնավորապես, մեղադրյալները սպասում են, որ նա կգնա դատարան ու ցուցմունք տալով կապացուցի, թե ինչ ապօրինի գործ են հարուցել իրավապահ մարմինները, ու իր ենթակայության տակ գործող պաշտոնյաները ինչքան անմեղ են: Ասել է թե՝ «քովիդի գործով» մեղադրյալները հույս ունեն, որ Թորոսյանը, ինչպես ճողոպրեց այս քրեական գործից որպես ենթադրյալ մեղադրյալ, նույնպես եւ դատարանից չոր դուրս կգա: Հայտնել էինք, որ հակակոռուպցիոն դատարանում սկսվել է վկաների հարցաքննության փուլը: Մեր տեղեկությունների համաձայն՝ հակակոռուպցիոն դատարան հարցաքննության կիրավիրվի առողջապահության նախկին նախարար, ներկայումս ՔՊ պատգամավոր Արսեն Թորոսյանը, ով այս չարաշահումների գործով վկայի կարգավիճակով մեկ անգամ արդեն հարցաքննվել է:

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉ ԿՎՃՌՎԻ ԱՐՑԱԽԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԴԱՏԻՆ

Ինչպես հայտնի է արդեն այսօր՝ հունվարի 17-ին, Բաքվում ադօրինի կալանքի տակ գտնվող Արցախի ռազմաքաղաքական ղեկավարների դեմ հարուցված գործով նախադատաքննական դատական նիստը կկայանա: Լեռնային Ղարաբաղի նախկին նախագահ Արայիկ Հարությունյանին եւ Ռուբեն Վարդանյանին մեղադրանքներ են առաջադրվել մի շարք ծանր հոդվածներով: Դատավարության եւ հնարավոր վճիռների վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արցախի Աժ պատգամավոր Մեսրոպ Հակոբյանի հետ:

-Տիկին Հակոբյան, գիտենք որ այսօր Արցախի ռազմաքաղաքական ղեկավարների գործով դատավարությունն է կայանալու: Ըստ Ձեզ՝ ինչ սպասել դատավարությունից, ինչ որոշում կկայացվի, քանի որ շատ են տեսակետները, որ գուցե ընդհուպ ցմահ դատապարտում վճռվի:

-Սա ամենացավալի հարցն է մեր իրականության մեջ, որի վերաբերյալ դժվար է կանխատեսումներ անել եւ չեմ էլ ուզում անել, բայց մինչ դրան անդրադառնալը կցանկանամ ասել, որ մենք՝յուրաքանչյուրս, պետք է հասկանանք, որ Բաքվում այս ամբողջ մեկ տարվա ընթացքում իրավապահները ժամանակ առ ժամանակ ներկայացրել են իրականությունը, եւ գիտենք, որ այնտեղ մեր հայրենակիցները գտնվում են սարսափելի ծանր պայմաններում, խոշտանգումների են ենթարկվում, չափազանց ստորացուցիչ պայմաններում ապրում: Յուրաքանչյուրս, որեւէ կարծիք ասելուց առաջ, նախ պետք է փորձենք մեզ պատկերացնել նման իրավիճակում: Մենք շատ լավ հասկանում ենք, որ Ադրբեջանը՝ մասնավորապես Բաքվի բռնապետը, բնական է, որ առիթը մաքսիմալ փորձելու է օգտագործել, եւ իր հիմնական նպատակը լինելու է մեզ ավելի խոր ճնշումների ենթարկելը, հոգեպես ավելի ընկճելը, ծանր ապրումների մեջ պահելը, մյուս կողմից, նա իր ներքին լսարանի համար է դա անում. ցույց տալու համար՝ տեսեք, սա ամենեւին էլ այն հաղթած երկիրը չէ, եւ նրանք այն հերոսները չեն այլ այն, ինչ-որ մենք ներկայացնում ենք: Իսկ մենք գիտենք, թե այս մեկ տարվա ընթացքում նրանք ինչպիսի կեղծ տեղեկություններ են տարածել, թե՛ Արցախի ժողովրդի մասին, թե՛ քաղաքական վերնախավի մասին: Մենք չենք կարող հաստատ իմանալ իրենք արդյոք կարողացե՞լ են կորզել այն հորինած կեղծ փաստերը, ինչը ցանկանում են ստանալ եւ ներկայացնել, թե ոչ, բայց ամեն դեպքում մենք պատրաստ պիտի լինենք ամեն ինչի ու պիտի հասկանանք, որ այն հայտարարությունները, որոնք կարվեն, միջազգային իրավունքի առումով ոչինչ են եւ չեն կարող հիմք հանդիսանալ որեւէ եզրակացության, որովհետեւ մարդիկ գտնվում են պատանդի կարգավիճակում, հետեւաբար որեւէ հայտարարություն միջազգայնորեն չի կարող ընդունվել: Մյուս կողմից մենք պետք է հասկանանք եւ հոգեպես լինենք մեր ընկերների, հարազատների, ղեկավարների կողքին, եւ ես վստահ եմ, որ իրենք հիմա ավելի շատ կարիք ունեն մեզ ուժեղ տեսնելու:

Ինչ ակնկալել մեր հայտարարությունից. բնական է, որ ակնկալիքները մեծ չեն, որովհետեւ առաջին բանը, որ պիտի արվեր, Հայաստանի իշխանությունների կողմից մեկ տարվա ընթացքում եւ գերիների եւ ռազմաքաղաքական վերնախավի, պատանդառված անձանց համար պայքարելն էր, որը ցավոք չարվեց: Մենք այս ընթացքում հնարավոր եւ անհնար բոլոր լծակներն օգտագործել ենք՝եւ ակցիաներ, եւ ոչ դիվանագիտական խողովակներով խնդիրները լուծելու փորձեր, սակայն մեր հնարավորությունները խիստ սահմանափակ են, ինչպես հասարակության այնպես էլ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի, հետեւաբար մեկ անգամ եւս մեր հայտարարությամբ փորձել ենք սթափեցնել հիմնականում Հայաստանի իշխանություններին՝ ցույց տալով մեր ակնկալիքը իրենցից: Բայց, ցավոք, իրենց կողմից դարձյալ լռություն է:

Հիշեցնենք, որ Արցախի խորհրդարանը երեկ հանդես էր եկել հայտարարությամբ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ԲԱՆՏԻՑ

«Բաքվի բանտում ադօրինի պահվող քաղբանտարկյալ Ռուբեն Վարդանյանի ուղերձը (փոխանցվել է ընտանիքին հեռախոսազանգի ընթացքում)

Ցանկանում եմ դիմել միջազգային հանրությանը, մարդկանց, որոնք անտարբեր չեն այն ամենի նկատմամբ, ինչ կատարվում է մեր տարածաշրջանում եւ երկարատեւ ու իրական խաղաղություն են ուզում:

Ես՝ Ռուբեն Վարդանյանս, 2023 թ. սեպտեմբերի 27-ից արդեն ավելի քան 470 օր գտնվում եմ Ադրբեջանի Հանրապետության պետական անվտանգության ծառայության մեկուսարանում: Այդ օրերից 340-ը ես անցկացրել եմ մենախցում, 23-ը՝ պատժախցում: Դատավարությունից առաջ ցանկանում եմ հետեւյալ հայտարարությունը փոխանցել: Եթե դուք կարդում եք սա, նշանակում է, ես սպառել եմ այստեղ կատարվողի մասին ճշմարտությունը ձեզ հասցնելու բոլոր այլ միջոցները:

Հունվարի 17-ին՝ժամը 15:00-ին, նշանակված է իմ գործով դատական նիստը: Ինձ ասվել է, որ ինձ առաջադրված է 42 մեղադրանք, որոնցից մի քանիսով նախատեսվում է ընդհուպ մինչեւ ցմահ ազատազրկում:

Բայց մինչեւ հիմա ինձ հնարավորություն չի տրվել ծանոթանալու պաշտոնական մեղադրական եզրակացությանը: Ինձ եւ իմ փաստաբանին ընդամենը թույլ են տվել թերթել 422 հատորանոց քրեական գործը ադրբեջաներենով, որին ես չեմ տիրապետում, եւ դրա համար հատկացվել է բավականին կարճ ժամանակահատված՝ 2024թ. դեկտեմբերի 9-ից մինչեւ 2025 թվականի հունվարի 8-ը:

Հոդվածների ցանկը, որոնցով ինձ մեղադրանքներ են առաջադրված, ռուսերենով ես ստացել եմ միայն 2025թ. հունվարի 8-ին:

Միեւնույն ժամանակ ճնշում է գործադրվել իմ, իմ փաստաբանի եւ թարգմանչի վրա, որպեսզի ստիպեն մեզ ստորագրել փաստաթղթեր հետին թվով, այդ թվում՝ չկայացած հարցաքննությունների կեղծ արձանագրություններ:

Պաշտոնապես հայտարարում եմ հետեւյալը. իմ ձերբակալման առաջին օրվանից ի վեր ես ոչ մի ցուցմունք չեմ տվել, բացառությամբ առաջին հարցաքննության, որի ժամանակ ուղղակի ասել եմ իմ անուն-ազգանունը: Եվս մեկ անգամ ընդգծում եմ. իմ ստորագրությամբ բոլոր արձանագրությունները կեղծ են: Այդ փաստաթղթերն իրականում գոյություն չունեն: Իմ փաստաբանին եւ թարգմանչին ստիպել են իրենց ստորագրությունները դնել այդ փաստաթղթերի տակ:

Ես նորից եմ հայտարարում ու պնդում իմ բացարձակ անմեղության, իմ հայրենակիցների անմեղության մասին եւ պահանջում եմ անհապաղ դադարեցնել մեր նկատմամբ այս քաղաքականացված գործը:

Չնայած մեր անմեղությանը եւ գործի քաղաքական դրդապատճառներին՝ շատ հավանական է, որ մեղադրողները կանտեսեն իմ հայտարարությունը եւ կսկսեն դատավարությունը: Այս պարագայում ես խնդրում եւ պահանջում եմ ձեզնից աջակցել իմ հետեւյալ պահանջներին՝

1. Ինձ ու իմ փաստաբանին հնարավորություն տալ լիարժեք պատրաստվել պաշտպանության: Մասնավորապես, մեզ ժամանակ եւ հնարավորություն տալ ուշադիր ծանոթանալ գործի նյութերին ռուսերենով:

2. Վերացնել թույլ տրված խախտումներն ու կեղծիքները: Մասնավորապես, ճանաչել անընդունելի բոլոր կեղծ փաստաթղթերն ու հարցաքննությունների արձանագրությունները, որոնք երբեք չեն անցկացվել, քանի որ ես ոչ մի ցուցմունք չեմ տվել իմ ձերբակալման օրվանից ի վեր:

3. Իմ եւ մյուս բոլոր մեղադրյալների նկատմամբ դատավարությունն անցկացնել հրապարակային: Ես պնդում եմ, որ լինի առավելագույնս բաց դատաքննություն՝ միջազգային լրատվամիջոցների եւ հումանիտար կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

4. Միավորել իմ գործը մյուս մեղադրյալների գործերի հետ: Իմ՝ 422 հատորանոց գործի ավելի քան 400 հատորները ընդհանուր գործի էպիզոդներ են: Դրանից միայն 6-ն է վերաբերում իմ նկատմամբ առաջադրված կեղծ մեղադրանքներին: Իմ գործի առանձնացումը արհեստական եւ անհիմն որոշում է:

Ոչ չարություն, ոչ ատելություն ես չեմ զգում: Հակառակը, ես անկեղծորեն կարեկցում եմ բոլոր նրանց, ովքեր օրենք, բարոյական սկզբունքներ ու Ղուրանի պատվիրաններ են խախտում:

Ես վստահ եմ, որ իրական խաղաղությունը հնարավոր կլինի միայն այն ժամանակ, երբ հակամարտությունում ներգրավված երկրների առաջնորդները, իրենց հասարակությունների հավանությամբ, կկարողանան միասին ծաղիկներ խոնարհել այս պատերազմում բոլոր ընկածների շիրիմներին:

Ես խոստանում եմ անել ամեն հնարավորը, որ դա տեղի ունենա իմ կենդանության օրոք: Ինչպես ասել է մեծն Մահաթմա Գանդին, աշխարհն ինքնաոչնչացումից փրկելու միակ ճանապարհը առանց բռնության, ճշմարտության եւ սիրո սկզբունքներով ապրելն է: Մենք կարող ենք հասնել իրական խաղաղության բոլոր մարդկանց նկատմամբ կարեկցանքի միջոցով՝ անկախ նրանց մաշկի գույնից, ազգությունից կամ դավանանքից:

Շնորհակալ եմ բոլորին աջակցության համար: Բոլորին սիրում եմ եւ երախտապարտ եմ՝ իմ նկատմամբ բարի վերաբերմունքի համար: Իմացեք, որ ես ամուր եմ, դիմանում եմ եւ հավատում եմ, որ ճշմարտությունը հաղթելու է:»

ԵՐԲ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՓԱՐԱՔԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արմավիրի մարզի Փարաքար համայնքում ավագանու արտահերթ ընտրություններ կանկացվեն:

Կառավարության երեկվա նիստում որոշվեց վաղաժամկետ դադարեցնել համայնքի ավագանու լիազորությունները:

Ավագանու ընտրությունները կանցկացվեն մարտի 31-ին:

ԳԼԵՆԴԵԼԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԲՆԱԿԱՆՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Լոս Անջելեսում հրդեհների պատճառով հայտարարված արտակարգ իրավիճակներից հետո Գլենդել քաղաքը վերադառնում է բնականոն գործունեության: Այս մասին հրապարակված տեսանյութում հայտնել է Գլենդելի քաղաքապետ Էլեն Ասատրյանը:

«Արտակարգ իրավիճակներից հետո քաղաքը վերադառնում է բնականոն գործունեության: Մեր քաղաքը բախվեց զգալի մարտահրավերների, բայց ձեր համագործակցության եւ մեր նվիրված թիմի տքնաջան աշխատանքի շնորհիվ մենք հիմա Արտակարգ իրավիճակների 3-րդ մակարդակում ենք: Ինչպես միշտ՝ ձեր անվտանգությունը մեր առաջնահերթությունն է»,-ասել է քաղաքապետը:

Նրա խոսքով՝ թեեւ Գլենդելը խուսափել է հրդեհներից, սակայն զգալի վնասներ են կրել: Արտակարգ դրության հայտարարման սկզբից ի վեր արձանագրել են 709 միջադեպ եւ 3431 արտակարգ զանգ:

«Մեր բնակիչներին, բիզնեսների սեփականատերերին եւ քաղաքային անձնակազմին ձեր ուժը, միասնությունն ու աջակցությունն անհավանական են: Շարունակենք վերակառուցել, աջակցել միմյանց եւ ամրապնդել այն կապերը, որոնք մեր Գլենդելը դարձնում են այդքան յուրահատուկ: Մենք արտասովոր մարդկանց համայնք ենք եւ միասին կարող ենք հաղթահարել ամեն ինչ»,-նշել է Ասատրյանը:

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՆՈՐ ՏԵՂԱԿԱԼ ՈՒՆԻ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշում է ստորագրել Լիլյա Սիրականյանին էկոնոմիկայի նախարարի տեղակալ նշանակելու մասին:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով՝Լիլյա Սիրականյանին նշանակել էկոնոմիկայի նախարարի տեղակալ»,- նշված է որոշման մեջ:

Վարչապետի մեկ այլ որոշմամբ՝Սեւակ Միքայելյանն ազատվել է էկոնոմիկայի նախարարի տեղակալի պաշտոնից:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով՝Սեւակ Միքայելյանին ազատել էկոնոմիկայի նախարարի տեղակալի պաշտոնից»,- ասված է որոշման մեջ:

ԳՈՐԾԱԴՈՒԼ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրաստանում օրերս մի շարք խանութների, սրճարանների, հիվանդանոցների, բանկերի աշխատակիցներ գործադուլ են հայտարարել: Գործադուլի մասնակիցներն իրենց բողոքի ձայնն են բարձրացնում իշխող «Վրացական երազանք» կուսակցության վարած քաղաքականության դեմ եւ պահանջում են նոր ընտրություններ անցկացնել, ինչպես նաեւ ազատ արձակել վերջին ցույցերի ընթացքում ձերբակալվածներին:

Գործադուլին աջակցել են նաեւ մի շարք ընկերություններ ու կազմակերպություններ:

Ավելի ուշ տեղեկություններ ի հայտ եկան այն մասին, որ անհայտ անձինք հարձակվել են գործադուլի մասնակիցների վրա, ինչպես նաեւ ցուցարարների մի մասը սկսել է շարժվել դեպի խորհրդարան:

Կազմակերպիչների խոսքով՝ սա դեռ «նախազգուշական» ակցիա էր, պահանջը չկատարելու դեպքում՝ ավելի է թեժանալու իրավիճակը:

ԿԵՂԾ ԱՀԱՋԱՆԳ

Մոսկվա-Նովոսիբիրսկ չվերթ իրականացնող Boeing 737-800 ինքնաթիռը ստիպված է եղել հետ վերադառնալ Շերեմետեւո օդանավակայան այն բանից հետո, երբ ուղեւորը հայտնել է ինքնաթիռում ռումբի առկայության մասին:

Այս մասին հայտնում է «ՌԻԱ Նովոստին»՝ վկայակոչելով արտակարգ իրավիճակների ծառայության ներկայացուցչի խոսքերը:

«Ինքնաթիռը վերադարձել է մեկնման օդանավակայան, իսկ ռումբի մասին հաղորդած անձը ձերբակալվել է»,- ասել է գործակալության ներկայացուցիչը:

Նա հավելել է, որ օպերատիվ ծառայությունների մասնագետները ստուգում են ինքնաթիռը: Միջադեպի հանգամանքներն պարզվում են:

ՀԱՄԱՍ-Ը ՀԱՎԱՏԱՐԻՄ Է ՀՐԱԴԱԴԱՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆԸ

Պաղեստինյան ՀԱՄԱՍ շարժումը հավատարիմ է Գազայի հատվածում հրադադարի համաձայնագրին, ասել է շարժման քաղբյուրոյի անդամ Իզզաթ ալ-Ռիշքը:

Ավելի վաղ Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուի գրասենյակը ՀԱՄԱՍ-ին մեղադրել էր միջնորդների հետ համաձայնեցված՝ Գազայի հատվածի վերաբերյալ համաձայնագրի կետերից հրաժարվելու եւ վերջին պահին զիջումների հասնելու փորձի համար:

«ՀԱՄԱՍ»-ը հավատարիմ է միջնորդների կողմից հայտարարված հրադադարի համաձայնագրին», - ասվում է ալ-Ռիշքան հայտարարության մեջ:

ՕԲՅԵԿՏԻՎ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՊԱՏՃԱՌՆԵՐ

ԻՆՉՈՒ Է ԿՐԿԻՆ ՓԱԿ ՎԵՐԻՆ ԼԱՐՍԸ

Վերին Լարսը կրկին փակ է բեռնատար տրանսպորտի համար: Անգամ սահմանափակումներ են մտցվել վաս եղանակի պատճառով: Թեթեւ մարդատար տրանսպորտային միջոցների համար ճանապարհը մնում է բաց:



Ֆեյսբուքյան խմբերում նույնիսկ գրառումներ կան այն հարցադրմամբ, որ արդյոք թույլ տալի՞ս են անցնել անցակետով, ինչին պատասխանել են, որ թույլ չեն տալիս անցնել միայն նրանց, ում մոտ նկատել են ինչ-որ տարօրինակ բան, որը փորձում են սահմանով անցկացնել իրենց հետ:

Հիշեցնենք, որ դեկտեմբերի 31-ին Վերին Լարս անցակետի մոտ գրեթե 850 հայկական բեռնատար էր սպասում:

Իսկ ինչո՞ւ եւ ինչպե՞ս է առաջանում բեռնատարների խցանումը, արդյոք դա ինչ-որ կերպ կարո՞ղ է ազդեցություն ունենալ մեր տնտեսության վրա:

Թեմայի շուրջ ArmLur.am-ը զրուցել է տնտեսագետ Գագիկ Մակարյանի հետ:

-Պարոն Մակարյան, ինչո՞ւ եւ ինչպե՞ս են առաջանում Լարսի անցակետում բեռնատարների խցանումները:

-Վերին Լարսի այդ անցակետի փակվելու օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներ կան: Օբյեկտիվ պատճառները բնական կլիմայական պատճառներն են, որ երբեմն ուժեղ ձյուն գալու հետեւանքով՝ այդ հատվածներում անանցանելի ճանապարհներ են առաջանում, տարածքը չեն հասցնում մաքրել կամ մեքենաները դանդաղ են գնում, ինչպես օրինակ ցանկացած փողոցում երթեւեկությունը դանդաղ է, իսկ մեքենաները շատ են, գալիս են, աստիճանաբար մի հատվածում կուտակվում: Սա մի պատճառն է: Երկրորդը, որ ունի սեզոնային բեռնափոխադրման տարողունակություն: Այսինքն, եթե բեռնատարները տվյալ սեզոնին ավելի շատ են բեռ տեղափոխում, որովհետեւ Նոր տարի է, դեկտեմբեր է կամ հունվար է, տարվա սկիզբ է կամ տարվա ինչ-որ եղանակ է, որ կապված է տոնի եւ կամ զուտ արտադրական գործընթացների հետ, այն երկրում, որտեղ, որ մատակարարվում է, բնականաբար կարող են բեռնատարների քանակները ուղղակի ավելի լինել, ինչպես եղավ եւ կոնկրետ Հայաստանի դեպքում, եւ առաջացնել խցանում: Երրորդ պատճառը կարող է լինել այն, որ մաքսակետերում աշխատողների թվաքանակը, մաքսակետային այդ խցիկները, որտեղ, որ առանձին-առանձին մեքենաները մոտենում, ձեւակերպվում են, այդ քանակները երբեմն բավարար չեն լինում, ինչպես օրինակ օդանավակայանում. գնում ես անձնագրային կետերով անցնելու՝ քիչ մարդիկ կան այդ սեղանների մոտ, որպեսզի անցագրերը ստուգեն, ու կրկին հերթ է առաջանում:

Հնարավոր է, որ ուղղակի մասնագետներ չկան, վատառողջ են կամ արձակուրդում են, կամ էլ ուղղակի ռուսական կողմը քիչ է այդ օրը մաքսավորներ տրամադրել եւ մաքսակետերը հիմնականում չեն հասցնում աշխատանքը. դա էլ մեկ պատճառ է: Հաջորդ պատճառը կարող է լինել այն, որ մեր բեռնափոխադրումների պիկը կարող է զուգադիպել այլ երկրների բեռնափոխադրումների հետ:

Ռուս-ուկրաինական պատերազմի պատճառով անվտանգության չափանիշները վատացան, ռիսկերը մեծացան ու ստացվեց այնպես, որ եթե Վերին Լարսից առաջ օգտվում էր հիմնականում ավելի շատ Հայաստանը, սկսեց օգտվել նաեւ Վրաստանը, որոշ չափով Ադրբեջանը, Իրանը, որը նույնիսկ Հայաստանով տանում էր բեռներ դեպի Ռուսաստան, երբեմն էլ նաեւ Թուրքիա: Այսինքն՝ 5 պետությունների բեռների փոխադրման կետ դարձավ Վերին Լարսը: Իհարկե նախկինում այնտեղ 8-10 կետ էր, հետո կարծեմ դարձավ 32 կամ 36 կետ, բայց միեւնույնն է՝ կարող է այնպես լինել, որ զուգահեռաբար այլ երկիր էլ շատ բեռներ տանի այդ նույն ամսին կամ նույն շաբաթ:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ԱԺ-Ի ՊԱՏԱՍԽԱՆԻՆ

Հունվարի 15-ին ՀՀ ԱԺ շենքի բակում էին հավաքվել սուրճի սարքավորումներով զբաղվող տնտեսվարողները, որոնք նաեւ հավաքվել են Երեւանի քաղաքապետարանի շենքի դիմաց:

Սուրճի սարքավորումների տնտեսվարողները նախկինում իրենց սարքավորումների մեկ քառակուսի մետրի համար վճարել են 500 դրամ, այսինքն՝ եղել են սարքեր, որոնց համար վճարել են 7500-15.000 դրամ:

Այժմ կա որոշում, որ սարքավորումների համար կա ֆիքսված գին՝ 40.000 դրամ:

Իսկ ի՞նչ են պահանջում տնտեսվարողները:

Նույն օրը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում տնտեսվարողներից Արտաշես Ավանեսյանն ասաց. «Ավագանու որոշում է եղել, որ սուրճի մետաղադրամով շահագործվող ապարատներ, բանկոմատներ, տերմինալներ եւ մի շարք այլ սարքավորումների սակագին է փոխվել, այսինքն՝ դարձել է 40.000 դրամ: 1 քառակուսի մետրի համար օրվա գինը եղել է 500 դրամ: Ըստ ապարատների զբաղեցրած մակերեսի՝ միջինում գինը եղել է 7500 դրամ, ապարատ է եղել՝ 10.000-15.000 դրամ: Հիմա փոխվել է եւ դարձել ֆիքսված 40.000 դրամ: Մեր հարցն այն է, թե ինչ ստանդարտներով, չափորոշիչներով, ոլորտի ինչ ուսումնասիրությամբ է եղել, որ սակագինը որոշվել է : Քաղաքապետարանում հանդիպում ենք ունեցել առեւտրի վարչության պետի հետ: Հարցեր ու պատասխաններ են հնչել, որոնց մի մասը մեզ բավարարել են, իսկ մյուս մասը չեն բավարարել»:

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ կապ հաստատեց Արտաշես Ավանեսյանի հետ, ով «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցեց, որ երեկ ԱԺ-ից պատասխան չեն ստացել:

«Պատասխան չի եղել, քննարկում է եղել, որի արդյունքում էլ ասացին, որ մի քանի օրվա ընթացքում կկապվեն մեզ հետ՝ հավանաբար քաղաքապետարանից: Միգուցե հրավիրեն եւ նոր վերջնական որոշում կլինի»,- ասաց տնտեսվարողը:

Թե ինչ կլինի հաջորդիվ, սպասենք զարգացումներին:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԵՎ ԱԼԻԵՎԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Հունվարի 20-24-ին Դավոսում (Շվեյցարիա)՝ Համաշխարհային տնտեսական համաժողովում, ողջ աշխարհի ղեկավարները կքննարկեն այս տարվա գլոբալ խնդիրները եւ առաջնահերթությունները: Համաշխարհային տնտեսական համաժողովի պաշտոնական կայքի համաձայն՝ համաժողովին կմասնակցի նաեւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Հանդիպմանը կմասնակցեն ավելի քան 130 երկրների 350 պետական ներկայացուցիչներ, այդ թվում՝ 60 պետությունների եւ կառավարությունների ղեկավարներ, որոնց թվում են Եվրահանձնաժողովի ղեկավար Ուրսուլա ֆոն դեր Լայենը, Չինաստանի փոխվարչապետ Դին Սյուեսյանը եւ Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցը: Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին երեքշաբթի հանդես կգա «հատուկ ուղերձով»: ՀՏՀ-ին կմասնակցեն Իսրայելի նախագահ Իսահակ Հերցոգը եւ Պաղեստինի ինքնավարության վարչապետ Մոհամադ Մուստաֆան, ինչպես նաեւ Իրանի փոխնախագահ Մոհամադ Ջավադ Զարիֆը: Համաժողովին կմասնակցեն Սիրիայի արտաքին գործերի ժամանակավոր նախարար Ասադ ալ-Շայբանին, ինչպես նաեւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

Համաժողովին կմասնակցեն նաեւ բիզնեսի, միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, գիտության, լրատվամիջոցների եւ արվեստի ներկայացուցիչներ: Ընդհանուր առմամբ հանդիպմանը կմասնակցի 3 հազար մարդ:

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՆՉ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ ԵՐԵԿ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հունվարի 15-ից 16-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 131 դեպք, որոնցից 11-ը՝ նախկինում կատարված:

Մասնավորապես, տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու՝ 29, թմրանյութի հայտնաբերման՝ 15, խարդախության՝ 11, ֆիզիկական ներգործության՝ 10, մարմնական վնասվածք պատճառելու՝ 7, անձնական ունեցվածքի գողության՝6, հոգեկան ներգործության, սեքսուալ բնույթի բռնի գործողության, թմրանյութի իրացման եւ սառը զենք կրելու՝ 3-ական, դրամանենգության, խուլիգանության, պաշտոնեական լիազորությունների չարաշահման, ծառերը-թփերը ապօրինի հատելու, ջրային կենդանիների ապօրինի որսալու կամ ջրային բույսեր ապօրինի արդյունահանելու եւ դատական ակտը չկատարելու՝ 2-ական, մարդու առեւանգման, բնակարանային գողության, շորթման, համակարգչային հափշտակության, գույքը ոչնչացնելու կամ վնասելու, կաշառակերության, պաշտոնական կեղծիքի կամ անփութության, մասնավոր ոլորտում ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու, ինքնիրավչության, հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի եւ այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառության, ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքի, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելու, աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելու, անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելու, հոիության ապօրինի արհեստական ընդհատում (աբորտ) կատարելու, արգելանքի տակ գտնվող գույքի նկատմամբ արարք կատարելու, երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը չկատարելու եւ փաստաթղթեր կեղծելու՝1-ական դեպք:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության՝ 3, բնակարանային գողության եւ շորթման՝ 2-ական, սպանության փորձի, գույքը ոչնչացնելու կամ վնասելու, ճանապարհատրանսպորտային պատահարի ու խարդախության՝ 1-ական դեպք: Հայտնաբերվել է 5 հետախուզվող: Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 5 դեպք:

Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 18 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀՀ ՆԳՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՊՕՐԻՆԻ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԵՎ ԻՐԱՑՐԵԼ Է ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐ

Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժնում տեղեկություններ են ստացվել, որ Էջմիածին քաղաքի բնակիչ 66-ամյա տղամարդն իր բնակության վայրում ապօրինի պատրաստում եւ իրացնում է ալկոհոլային խմիչքներ:

Ներքին գործերի նախարարությունից հայտնում են, որ ստուգման նպատակով նույն օրը ոստիկաններն այցելել են տղամարդուն: Տանտերն իրավապահներին հայտնել է, որ նկուղում ունի պատրաստված կեղծ ալկոհոլային խմիչքներ եւ դրանք պատրաստելու համար պարագաներ, որոնք պատրաստ է ներկայացնել:

Դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում անցկացված զննության ընթացքում նա ներկայացրել է 7 շիշ օղի, 7 շիշ տարբեր տեսակի կոնյակներ, 5 լիտրանոց պլաստիկ տարայով կոնյակ, 4 լիտր պլաստիկ տարայով օղի, օղու 18 խցան, 390 հատ դատարկ շիշ:

Տղամարդը ձերբակալվել եւ կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է Վաղարշապատի քննչական բաժին:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ՀԱՐԵՎԱՆԻՆ ԴԱՆԱԿԱՀԱՐԱԾ ՏՂԱՄԱՐԴԸ

Հունվարի 14-ին՝ ժամը 13:10-ին, ՆԳՆ ոստիկանության Արմավիրի մարզի օպերատիվ կառավարման կենտրոն «Վաղարշապատ» բժշկական կենտրոնից հաղորդում է ստացվել, որ «կրծքավանդակի ծակած-կտրած թափանցող վերք» ախտորոշմամբ բուժօգնության է դիմել Էջմիածնի բնակիչ, 33-ամյա մի տղամարդ:

Քրեական ոստիկանության Արմավիրի մարզային վարչության եւ Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ժամը 12:30-ի սահմաններում Էջմիածնի Պուշկինի փողոցում հարեւանների միջեւ տեղի ունեցած վիճաբանության ժամանակ 36-ամյա տղամարդը դանակով հարվածել է հարեւանին:

36-ամյա Էջմիածինցին հայտնաբերվել, ձերբակալվել եւ կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է Վաղարշապատի քննչական բաժին: Ավելի ուշ հիվանդանոցից հայտնել են, որ 33-ամյա տղամարդը մահացել է:

Ձեռնարկվում են միջոցառումներ հանցագործության գործիք դանակը հայտնաբերելու ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

Ս. ԱՄԻՐԽԱՆՅԱՆԸ՝ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ

Վարչապետի որոշմամբ՝ Սիրո Ամիրխանյանը նշանակվել է գլխավոր հարկադիր կատարող:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով՝ Սիրո Ամիրխանյանին նշանակել գլխավոր հարկադիր կատարող», - նշված է որոշման մեջ:

ԲԵՅՐՈՒԹՈՒՄ ՀԱՅ Է ՍՊԱՆՎԵԼ

Նախօրեին Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում հայ է սպանվել: Այս մասին հայտնում է «Արեւելք» պարբերականի էջը:

«Բեյրութի մեջ սարսափելի սպանություն է տեղի ունեցել: Զոհը մեր հայրենակից Վաչե Արսլանյանն է»,- ասված է հրապարակման մեջ:

Ըստ տեղեկությունների, սպանությունը կատարվել է հավանաբար կողոպուտի նպատակով, զոհին կապել են մահճակալին, ծեծել եւ զենք գործադրելով սպանել:

Վաչե Արսլանյանը ձեռնարկատեր է, «Սուրբ Հակոբ» եկեղեցու թաղական: Սպանության մանրամասները հայտնի չեն, միայն նշվում է, որ նա միայնակ է եղել շենքում, որի սեփականատերն է: Նա ամուսնացած է, ընտանիքի անդամները դեպքի պահին իր հետ չեն եղել:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հրայր Իշխանի Հովսեփյանը մեղադրվում է այն հանցավոր արարքի կատարման համար, որ, հանդիսանալով «Հայաստանի Հովվաշների Բուծողների Ասոցացիա» Շնասերների Հասարակական Կազմակերպություն ՀԿ-ի նախագահ, 2024 թվականի հունվարի 28-ին Արմավիրի մարզի Նորակերտ բնակավայրի մերձակայքում գտնվող ցանկապատված տարածքում կազմակերպել եւ իրականացրել է հովվաշների մարտեր:

Այսինքն՝ Հրայր Իշխանի Հովսեփյանին մեղսագրվում է հանցավոր արարքի կատարում, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 307-րդ հոդվածի 1-ին մասով:

Բացի այդ, Հրայր Իշխանի Հովսեփյանը, հանդիսանալով «Հայաստանի Հովվաշների Բուծողների Ասոցացիա» Շնասերների հասարակական կազմակերպություն ՀԿ-ի նախագահ, 2024 թվականի մարտի 10-ին Արմավիրի մարզի Նորակերտ բնակավայրի մերձակայքում գտնվող ցանկապատված տարածքում կազմակերպել եւ իրականացրել է հովվաշների մարտեր:

Այսինքն՝ Հրայր Իշխանի Հովսեփյանին մեղսագրվում է հանցավոր արարքի կատարում, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 307-րդ հոդվածի 1-ին մասով:

Այսպիսով, Հրայր Իշխանի Հովսեփյանին մեղսագրվում է 2 դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 307-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքի կատարում:

ՔՆՆՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հունվարի 15-ից 16-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 131 դեպք, որից 11-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՆ ՈՐՈՆՈՒՄ

Ուսուցիչների ցածր աշխատավարձը, լարված, նյարդային աշխատանքը հրապուրիչ չի դարձնում ուսուցչի աշխատանքը: Տավուշի մարզում՝ հատկապես գյուղերի դպրոցներում, մանկավարժների բազում թափուր հաստիքներ կան: Տավուշի մարզպետարանը հայտնում է Բերդ համայնքի Վերին Ծաղկավանի միջնակարգ դպրոցում «Հայոց լեզու եւ գրականություն» (20 դասաժամ), «Ռուսաց լեզու» (22 դասաժամ), «Մաթեմատիկա» (15 դասաժամ), զինղեկ (ՆԶՊ) (5 դասաժամ), դասվար (20 դասաժամ), «Պատմություն» (20 դասաժամ), «Թվային գրագիտություն եւ համակարգչային գիտություն» (10 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղերի մրցույթի մասին: Դիմումները ընդունվում են հունվարի 10-24-ը, մրցույթը կկայանա հունվարի 29-ին Վերին Ծաղկավանի միջնակարգ դպրոցում: Ավելի վաղ Տավուշի մարզպետարանը հայտարարություն էր տարածել Դիլիջան համայնքի Հովք գյուղի «Հովքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (19 դասաժամ), հայոց լեզվի եւ գրականության (6 դասաժամ), ռուսաց լեզվի (10 դասաժամ), տեխնոլոգիայի (4 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ), ինֆորմատիկայի, թվային գրագիտության եւ համակարգչային գիտության (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Մրցույթը պետք է տեղի ունենար 2024 թ. դեկտեմբերի 25-ին՝ժամը 12:00-ին, Հովքի միջնակարգ դպրոցում: Հովքի միջնակարգ դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լալա Ղուկասյանից տեղեկացանք, որ մրցույթը չի կայացել, քանի որ ոչ մի մասնակից չի եղել: Հովք գյուղի մի բնակիչ, ով չցանկացավ, որ իր անունը հրապարակվի, լրագրողիս հայտնեց, որ դպրոցի տնօրինությունը Հովքի բնակիչներին աշխատանքի չի ընդունում, գերադասում է աշխատանքի տեղավորել Իջեւան քաղաքի բնակիչներին: Հովքի բնակիչը հավելեց. «Շատ տխուր է մեր գյուղում երիտասարդների վիճակը, ուրիշ ոչ մի աշխատատեղ չկա, որտեղ կարողանան գոնե սկզբի համար աշխատեն: Ասեմ, որ Հովքից Հովքի դպրոցում վերջին յոթ -ութ տարում աշխատանքի ընդունել են միայն մի աղջկա, ով հիմա դասվար է ու չգիտեմ, թե ոնց է հաջողացրել: Դա մեզ մոտ արդեն սովորական է, ավարտող երիտասարդը չի էլ դիմում, մեկ է՝ գիտի, որ չի ընդունվելու, այլ տեղ ավելի գրկաբաց են ըմդունում ու ավելի սիրով»: Հովքի դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, Հովք գյուղի հարս Լալա Ղուկասյանին հարցրի,թե ինչո՞ւ տեղացի կադրերին աշխատանքի չեն ընդունում, նա ասաց,որ նման բան չկա, տեղացիները չեն դիմել: Նրան հարցրի, թե ինչո՞ւ Հովքի դպրոցի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ չի անցկացվում: Նա ասաց, որ դա ընթացքի մեջ է, դպրոցի տնօրենի ուսումնական գծով տեղակալ Սեդա Ասիրյանը այդ նպատակով դպրոցի զարգացման ծրագիր է գրում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԶԳՈՆՈՒԹՅԱՆ ԿՈՉ

«ԱԴՐԲԵՋԱՆԻ ԲԱՆՏԵՐՈՒՄ ԽՈՇՏԱՆԳՎՈՒՄ ԵՆՔ ԲՈԼՈՐՍ», ԱՐՑԱԽԻ ԱԺ

Արցախի Հանրապետության ազգային ժողովի հայտարարությունը 16 հայ գերեվարվածների նկատմամբ Ադրբեջանի կողմից սկսվող ապօրինի ու կեղծ դատավարության կապակցությամբ. «Մենք՝ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներս, խոր մտահոգությամբ եւ վրդովմունքով անդրադառնում ենք Ադրբեջանի տարածքում ապօրինի կերպով պահվող 16 հայ գերեվարվածների նկատմամբ սպասվող կեղծ «դատավարությանը»: Սա մի գործընթաց է, որը նպատակ ունի փոշիացնելու նրանց հիմնարար իրավունքներն ու ընդգծելու Ադրբեջանի կողմից օրեցօր ուժգնացող հայատյաց քաղաքականությունը:

Այդ «դատավարությունը», որն իրականացվում է առեւանգված եւ ապօրինի կերպով ու անմարդկային պայմաններում պահվող հայերի դեմ՝ ակնհայտ շինծու մեղադրանքներով եւ բազմաթիվ ընթացակարգային իրավախախտումներով, չի կարող օրինական ու լեգիտիմ համարվել: Ավելին՝ նման գործընթացներով ադրբեջանական վարչակազմն ուղղակիորեն փորձում է լեգիտիմացնել ցեղասպանական քաղաքականությունը, որն արդեն երկար տարիներ վարում է բոլոր հայերի եւ հատկապես Արցախի ժողովրդի նկատմամբ:

Մենք ակնկալում ենք մարդու իրավունքներով եւ տարածաշրջանային խաղաղությամբ մտահոգ պետություններից, միջազգային կառույցներից, իրավապաշտպան կազմակերպություններից, որ գործնական քայլեր կձեռնարկեն՝ նպաստելու բոլոր պատանդների անհապաղ ազատ արձակմանը: Կոչ ենք անում միջազգային հանրության բոլոր դերակատարներին չեզոք դիրքորոշման փոխարեն որդեգրել հստակ եւ սկզբունքային մոտեցում, որով կդատապարտվի Ադրբեջանի հակամարդկային քաղաքականությունը եւ կկանխվի ապօրինի դատավարության իրականացման ցանկացած փորձ:

Ակնկալում ենք նաեւ ՀՀ իշխանություններից, որ հետեւողականորեն ու վճռականորեն կբարձրացնեն այս հարցը բոլոր համապատասխան ատյաններում եւ բանակցություններում: Հայազգի բոլոր պատանդների իրավունքների պաշտպանությունն ու հայրենիք վերադարձը մտնում են ՀՀ պետական մարմինների իրավական ու բարոյական պարտավորությունների մեջ:

Կոչ ենք անում մեր հայրենակիցներին առավելագույն զգոնություն ցուցաբերել տեղեկատվական-հոգեբանական սադրանքների հանդեպ, որոնք ակնկալում են լրացուցիչ չափով խարխլել ազգային միասնականությունը: Հորդորում ենք չտարածել ադրբեջանական թեզերը հայկական տեղեկատվական դաշտում եւ չթիրախավորել մեր հայրենակիցներին այն ցուցմունքների կամ հայտարարությունների համար, որոնք կարող են արվել անմարդկային բռնաճնշումների ներքո: Հիշեցնում ենք, որ պատանդների ցանկացած հայտարարություն կամ ցուցմունք կարող է խեղաթյուրվել Ադրբեջանի քարոզչամեքենայի կողմից, ուստի անհրաժեշտ է բարձր զգոնություն ու ազգային պատասխանատվություն ցուցաբերել այս իրավիճակում:

Ադրբեջանական բանտերում խոշտանգվում եւ դատարաններում դատապարտվում ենք մենք բոլորս՝ ի դեմս մեր պատանդառված հայրենակիցների ու ընկերների: Ուստի, նրանց իրավունքների պաշտպանությունն ու անհապաղ ազատ արձակումը մեր բոլորիս արժանապատվության ու բարոյական պարտավորությունների հարցն է՝ անկախ որեւէ անձի հանդեպ այս կամ այն վերաբերմունքից:

Արցախի Հանրապետության Ազգային ժողովը վերահաստատում է իր հանձնառությունը իր ունեցած հնարավորությունների շրջանակներում պաշտպանելու Արցախի ժողովրդի իրավունքներն ու հավաքական շահերը, որի կարեւոր բաղադրիչներից մեկն էլ գերեվարված հայերի անհապաղ վերադարձն է հայրենիք»:

Արցախի Ազգային ժողով

ԼՈՒՐԵՐ

ԿՆԵՐԴՐՎԻ «ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ»

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունում երեկ տեղի է ունեցել նախարար Նարեկ Մկրտչյանի մասնակցությամբ մամուլի ասուլիս: Նախարարն ամփոփել է աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության ոլորտում 2024 թ. իրականացված աշխատանքները, նաեւ ներկայացրել 2025 թ. նախատեսվող նախաձեռնությունները:

Անապահովության գնահատման նոր համակարգի ներդրման շրջանակում «ընտանեկան» եւ «սոցիալական» նպաստների փոխարեն կներդրվի «անապահովության նպաստ», որի իրավունքը կունենան Կառավարության հաստատած գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված այն ընտանիքները, որոնց մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը ցածր կլինի անապահովության սահմանային շեմից: Կներդրվի նաեւ նոր ինստիտուտ, որի համաձայն՝ ընտանիքի աշխատունակ, բայց չաշխատող անդամներին կվերագրվի եկամուտ՝ Կառավարության նախատեսած դեպքերում, չափով ու ժամկետներում: Նոր համակարգը կգործարկվի 2025 թ. մարտի 17-ից Կոտայքի եւ Սյունիքի մարզերում, մյուս մարզերում՝ 2026 թվականից:

ՄԵԶՈՆԱՅԻՆ ԳՐԻՊԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՏԱՐԱԾՎԵԼ

Հանրապետությունում շարունակվում է սեզոնային գրիպի Ա տեսակի H1pdm09 ենթատեսակի շրջանառությունը: ՀՀ առողջապահության նախարարությունից տեղեկացնում են, որ այս համատեքստում հատկապես կարեւորվում է սեզոնային գրիպի դեմ պատվաստումների իրականացումը՝ հաշվի առնելով, որ գրիպի նշված տեսակը ներառված է հանրապետությունում առկա սեզոնային գրիպի դեմ քառավալենտ պատվաստանյութի կազմում:

Պատվաստումները կատարվում են կամավորության սկզբունքով, անկախ հաշվառումից եւ քաղաքացիությունից, պետական պատվերի շրջանակներում՝ առաջնահերթությունը տալով ռիսկի խմբերում գտնվող անձանց, որոնց շրջանում հիվանդությունը կարող է ընթանալ ծանր կամ բարդություններ առաջացնել:

Գրիպի դեմ պատվաստումների համար ռիսկի խմբերն են.

հղիները,

6 ամսականից մինչեւ 5 տարեկան երեխաները,

65 տարեկանից բարձր անձինք,

շաքարային դիաբետ, շնչառության օրգանների, սրտանոթային համակարգի, լյարդի, երիկամների քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք,

բուժաշխատողները,

փակ կազմակերպություններում գտնվող անձինք եւ սպասարկող անձնակազմ, զորակոչի ենթակա անձինք:

Սեզոնային գրիպի դեմ պատվաստումները հասանելի կլինեն նաեւ բնակչության այլ խմբերի համար, կարող են կիրառվել այլ պատվաստումների հետ համատեղ կամ ցանկացած ընդմիջումով, իսկ ռիսկի խմբերում ընդգրկված անձինք կարող են դիմել պոլիկլինիկա եւ պատվաստվել:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 18 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

«ՖԱՍԹ» ԲԱՆԿ

ՎԵՐԱԲԵՐԵՆԴԱՎՈՐՎԵԼ Է ՇԵՆԳԱՎԻԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ

«Ֆասթ» բանկը վերաբերենդավորել է Շենգավիթ համայնքի մասնաճյուղը: Բագրատունյաց 26 հասցեում գտնվող Բանկի մասնաճյուղն այժմ իր հաճախորդներին կընդունի նոր, ավելի ընդարձակ սրահում, որը հագեցած է նորագույն տեխնոլոգիաներով: «Ֆասթ» բանկի Շենգավիթ մասնաճյուղը, ինչպես «Ֆասթ»-ի մյուս բոլոր մասնաճյուղերը, աշխատելու է 24/7 աշխատանքային գրաֆիկով:

«Ֆասթ» բանկի ֆինանսական տնօրեն Գոհար Հարությունյանը նշել է. «Թվային հարթակների զարգացման եւ AI-ի՝ արհեստական ինտելեկտի գործիքների ներմուծմանը զուգահեռ մեր բանկը շարունակում է կարեւորել իր ֆիզիկական ներկայությունը, կենդանի շփումը: Այս մոտեցումը մեզ հնարավորություն է տալիս ամրապնդելու հաճախորդների հետ կապը, լսելու, հասկանալու, անհատականացված լուծումներ առաջարկելու համար: Մեր վերաբերենդավորված մասնաճյուղերը տեխնոլոգիաների եւ մարդկային շփման ջերմության լավագույն մարմնացումն են»:

Նորաբաց մասնաճյուղում վճարային տերմինալի միջոցով քաղաքացիները կարող են շուրջօրյա գործարքներ կատարել՝ կոմունալ վճարել, վարկ մարել, ավանդ համալրել, մուտքեր կատարել ընթացիկ եւ քարտային հաշիվներին եւ օգտվել բանկի տարբեր այլ ծառայություններից:

Նոր մասնաճյուղերի բացումը եւ արդեն իսկ գործող մասնաճյուղերի վերաբերենդավորման գործընթացը «Ֆասթ» բանկի շարունակական նախաձեռնություններից է՝ ուղղված հաճախորդների սպասարկման որակի գերազանցությանը:

Հավելենք, որ «Ֆասթ» բանկն առաջարկում է իր առաջին բանկային «Ակն» քարտերը, որոնք հասանելի են բոլոր մասնաճյուղերում: Բանկը գործակցում է ArCA, VISA եւ Master վճարահաշվարկային համակարգերի հետ: «Ֆասթ» բանկի «ԱԿՆ» քարտերը հնարավոր է ձեռք բերել ինչպես շուրջօրյա աշխատող բանկի մասնաճյուղերում, այնպես էլ «Ֆասթ» բանկի հավելվածի միջոցով:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը:«Ֆասթ» բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

«Ֆասթ» բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ԻՆՉ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԵՆ ՊԼԱՆԱՎՈՐՎՈՒՄ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 236 ՄԼՆ ԵՎՐՈ ՆՈՐ ՎԱՐԿ ԿՎԵՐՑՆԻ

ՀՀ կառավարության երեկվա նիստում հավանություն տրվեց հերթական վարկային ծրագրերին, որոնք Կառավարությունը կվերցնի միջազգային բանկերից:

Նախ հավանություն տրվեց «Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ Դիմակայուն եւ ներառական ճանապարհային հատվածի բարելավման ծրագրի համար Ասիական զարգացման բանկի միջոցներից վարկի տրամադրման մասին» համաձայնագրի ստորագրման առաջարկությանը: Ըստ այդմ՝ նախատեսվում է 236,0 մլն. Եվրո վարկ վերցնել:

Սա նախատեսված է Սիսիան-Քաջարան ճանապարհի Հյուսիսային ենթահատվածը կառուցելու համար:

Մասնավորապես՝ համաձայնագրի շրջանակներում կառուցվելու է կլիմային եւ աղետներին դիմակայուն շուրջ 27,1 կմ երկարությամբ ասֆալտբետոնե պատվածքով ճանապարհ, որը, ըստ Կառավարության, հնարավորություն կտա կրճատելու Սիսիան-Քաջարան ճանապարհային հատվածի երկարությունը, ինչի արդյունքում կնվազի երթեւեկության տեւողությունը, կավելանա տրանսպորտային միջոցների առկա 50 կմ/ժ միջին արագությունը (որը կհասնի շուրջ 100 կմ/ժ), կբարձրացվի երթեւեկության հարմարավետությունն ու անվտանգությունը:

Ճանապարհահատվածի կառուցման աշխատանքները ներառում են՝ ասֆալտբետոնե պատվածքով 11.1մ լայնությամբ (այդ թվում՝նաեւ ամրացված կողնակներ), 3 երթեւեկելի գոտիներով (3,30 մ) ճանապարհի կառուցումը, ինչպես նաեւ 3 թունելների, 16 կամուրջների, 83 հեղեղատների, 28 հենապատերի կառուցումը:

Մեկ այլ որոշմամբ՝ հավանություն տրվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջեւ 2023 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրի ստորագրման առաջարկությանը: Համաձայնագրով նախատեսվում է Վերականգնման վարկերի բանկից ստանալ մինչեւ 26.000.000 եվրո վարկ՝ «Վերականգնվող էներգետիկայի եւ էներգաարդյունավետության զարգացում. փուլ IV» ծրագրի համար եւ մինչեւ 2.000.000 եվրո դրամաշնորհ՝ վերոնշյալ ծրագրի իրականացման եւ խորհրդատվության համար անհրաժեշտ հարակից միջոցառումների համար:

Բացի դրանից՝ ԳԴՀ կառավարությունը ՀՀ կառավարությանը կամ երկու կառավարությունների կողմից համատեղ ընտրվելիք այլ վարկառուների հնարավորություն է ընձեռում ստանալ մինչեւ 40.000.000 եվրո արտոնյալ վարկ «Վերականգնվող էներգետիկայի եւ էներգաարդյունավետության զարգացում. փուլ V» ծրագրի համար, որը Վերականգնման վարկերի բանկի միջոցով հատկացվում է Զարգացման հանրային համագործակցության շրջանակում, ինչպես նաեւ մինչեւ 1.000.000 եվրո դրամաշնորհ՝ վերոնշյալ ծրագրի իրականացման եւ խորհրդատվության համար անհրաժեշտ հարակից միջոցառումների համար:

Ընդ որում, այս դեպքում Կառավարությունը Վերականգնման վարկերի բանկին որոշեց ազատել ուղղակի հարկերից, որոնք ՀՀ-ում ենթակա են վճարման՝ կապված նախագծի 1-ին հոդվածում նշված ծրագրերի կամ 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերի կնքման եւ իրականացման հետ:

Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Կառավարությունը հունվարի 16-ի նիստում պետք է որոշում կայացներ Եվրոպական ներդրումային բանկից եւ Ասիական զարգացման բանկից 236 մլն եվրո նոր վարկ վերցնելու մասին:

«Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ «Դիմակայուն եւ ներառական տնտեսական միջանցքի բարելավման ծրագրի» համար վարկ տրամադրելու մասին համաձայնագրով համաֆինանսավորվող Ծրագրի նպատակը Հայաստանի Հանրապետությանն աջակցելն է՝ կառուցելու Սիսիան-Քաջարան ճանապարհի Հյուսիսային ենթահատվածը:

Համաձայնագրի շրջանակներում կառուցվելու է կլիմային եւ աղետներին դիմակայուն շուրջ 27,1 կմ երկարությամբ ասֆալտբետոնե պատվածքով ճանապարհ, որը հնարավորություն կտա կրճատելու Սիսիան-Քաջարան ճանապարհային հատվածի երկարությունը, ինչի արդյունքում կնվազի երթեւեկության տեւողությունը, կավելանա տրանսպորտային միջոցների առկա 50 կմ/ժ միջին արագությունը (որը կհասնի շուրջ 100 կմ/ժ), կբարձրացվի երթեւեկության հարմարավետությունն ու անվտանգությունը»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

Shoonch, ԲԱՐՁՐՈՐԱԿ ՋՈՒՐ ԵՎ ԹԱՐՄՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆ ԿԱԹԻԼՈՒՄ

Շուրջ երկու տարի առաջ սկսվեց հայկական «Shoonch» ջրերի արտադրությունը:

Բրենդի անվանումն ու շշերի դիզայնը մշակելիս Shoonch-ի հիմնադիրներն ուսումնասիրել են համաշխարհային շուկայի տենդենցներն ու ստացել այնպիսի արտադրանք, որն իր ուրույն տեղը կունենա միջազգային շուկայում:

Ապարանի աղբյուրներից հոսող ջուրը Shoonch ջրերի գործարանում անցնում է հատուկ ֆիլտրացիոն համակարգ՝ պահպանելով հանքային ու քիմիական կարեւոր տարրերը: Գործարանում օրական շուրջ 40.000 շիշ ջուր է շշալցվում:

Shoonch-ը շուկայում ներկայանում է ոչ ստանդարտ 0.4, 0.6 եւ 0.8 լիտր ծավալով ջրի շշերով:

Արտադրության գործընկերը Հայաստանում լիզինգային շուկայի առաջատար «Ակբա» Լիզինգն է, որի աջակցությամբ էլ արտադրությունը համալրվել է առաջատար սարքավորումներով ու ավտոմատ հոսքագծերով:

«Մենք ընտրեցինք Shoonch անունը՝ շուկային նոր շունչ, ոճ եւ տեսք հաղորդելու համար: Առաջին հերթին մենք կարեւորում ենք սանիտարահիգիենիկ պայմաններն ու այն միջավայրը, որտեղ շշալցվում է ջուրը: «Ակբա» Լիզինգի հետ համագործակցության շրջանակում ձեռք ենք բերել ամբողջական հոսքագիծ, որի արդյունքում այսօր ունենք կանոնակարգված պրոցես՝սկզբնական վիճակից մինչեւ վերջնական պրոդուկտի ստեղծում: Որպես գործընկեր՝ «Ակբա» Լիզինգը բավականին պատշաճ եւ օպերատիվ ձեւով օգնել է արագ կազմակերպել բոլոր գործընթացները»,- նշում է «Հեդ Քորփորեյշն» ընկերության գործընկեր, գլխավոր տնօրեն Մնացական Ավետիսյանը:

Shoonch-ն առայժմ առկա է միայն տեղական շուկայում, առաջիկայում կարտահանվի Ռուսաստան, իսկ հետո արտահանման աշխարհագրությունն ավելի կընդլայնվի: Կմեծանա նաեւ տեսականին, շուկա կներկայացվեն գազավորված ու տարբեր համերով ըմպելիքներ:

«Ակբա» Լիզինգի 100% բաժնետերն «Ակբա» բանկն է:

«Ակբա» Լիզինգը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

60-70-ԱԿԱՆՆԵՐԻ ԼԵԳԵՆԴՆԵՐԸ

ՀՈՒՆՎԱՐԻ 16–Ը՝ «ԲԻԹԼԶԻ» ՕՐ

Երեկ՝ հունվարի 16-ին, աշխարհում նշվում էր բրիտանական «Բիթլզ» (The Beatles) ռոք խմբի օրը:



Իսկ ինչո՞ւ է օրը նշվում որպես Բիթլզի օր:

2001 թվականից, ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ, հունվարի 16-ը նշվում է որպես «Բիթլզի»-ի համաշխարհային օր: Բնականաբար ամսաթիվը պատահական չի ընտրվել: 1957 թվականի հունվարի 16-ին Լիվերպուլում բացվեց «The Cavern» ակումբը, որտեղ այն ժամանակ անհայտ երիտասարդ երաժիշտներ Ջոն Լենոնը, Փոլ Մաքքարթնին եւ Ջորջ Հարիսոնը սկսեցին իրենց ճանապարհը դեպի մեծ համբավ: Մի քանի տարի անց նրանց միացավ մեկ այլ ապագա «Բիթլ»-ը՝ Ռինգո Սթարը: Այսպիսով էլ հունվարի 16-ը համարվում է լեգենդար Բիթլզ խմբի օրը:

ArmLur.am-ը ներկայացնում է «Բիթլզ» խմբի հետ կապված հետաքրքիր փաստեր:

1. Հանրահայտ BBC լրատվականն արգելել է The Beatles-ի երգերից մի քանիսը: Օրինակ՝ I Am the Walrus երգն արգելված էր «վարտիք» բառի օգտագործման համար, իսկ ահա Fixing a Hole երգն արգելված էր, քանի որ երգի խոսքերում հիշատակվում էր թմրադեղերի մասին:

2. Ջոն Լենոնը եւ Փոլ Մաքքարթնին երգեր էին գրում ոչ միայն The Beatles խմբի, այլեւ այլ երգիչների համար: Նրանք գրել են From A Window երգը՝ Բիլի Կրամերի եւ Դակոտաս խմբի համար, Come and Get It երգը՝ Բեդֆինգեր խմբի համար, եւ Woman երգը՝ Փիթեր եւ Գորդոն դուետի համար:

3. The Beatles խմբի երեք անդամները՝ Մաքքարթնին, Հարիսոնը եւ Սթարը երաժշտական համատեղ կատարմամբ հանդես են եկել Էրիկ Կլեպտոնի եւ Փեթի Բոյդի հարսանիքի ժամանակ, որը տեղի է ունեցել 1979 թ.-ին: Ջոն Լենոնը չէր գնացել հարսանիքին:

4. Ջորջ Հարրիսոնն իր տված հարցազրույցներից մեկի ժամանակ ասել է, որ շատ է սիրում կոնֆետներ: Այդ հարցազրույցից հետո երկրպագուները բեմը պատել էին կոնֆետներով: Համերգներից մեկի ժամանակ երկրպագուհիներից մեկն այնպես է բեմ նետել կոնֆետը, որ այն կպել Հարրիսոնի աչքին: Հարրիսոնը իր մոլի երկրպագուներից մեկին նամակ գրեց, որում ասում էր, որ The Beatles-ի տղաներն իրականում կոնֆետ չեն սիրում, եւ խնդրում էր կոնֆետներ այլեւս չնետել բեմ:

5. Լենոնի կյանքում 9 թիվը խորհրդանշական է: Լենոնը ծնվել է 1940 թ.-ի հոկտեմբերի 9-ին, իսկ նրա որդին՝ 1975 թ.-ի հոկտեմբերի 9-ին: Լենոնի գրած #9 Dream երգը ներառվել է նրա իններորդ սոլո ալբոմի մեջ, որը թողարկվել է 1974 թ.-ի իններորդ ամսին՝ սեպտեմբերին, եւ զբաղեցրել ամերիկյան երաժշտական հաղորդումների իններորդ հորիզոնականը:

Այսպիսով՝ «Բիթլզ» խումբը, որին Rolling Stone ամսագիրը բոլոր ժամանակների մեծագույն արվեստի գործիչների ցուցակի 1-ին հորիզոնականում է ներառել, մինչ օրս պահպանում է առաջատարի իր դիրքը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՄՓՈՓՈՒՄ

ՈՎ Է ՀՖԿՍՊ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆՈՐ ՌԵԿՏՈՐԸ

ՀՀ կառավարության երեկվա նիստում հաստատվել են Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի ռեկտորի ընտրության արդյունքները:

Հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը՝ նշելով, որ որոշման ընդունման անհրաժեշտությունը բխում է «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի պահանջից, ըստ որի՝ պետական բուհի ռեկտորն ընտրվում է բաց մրցույթով՝ ուսումնական հաստատության խորհրդի գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Ռեկտորի ընտրության արդյունքները հաստատում է բուհի հիմնադիրը՝ ՀՀ կառավարությունը:

2024 թվականի դեկտեմբերի 10-ին տեղի է ունեցել «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ, որին մասնակցելու համար գրանցվել էր մեկ հավակնորդ՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Տիգրան Սիմոնյանը:

Մրցույթն ընթացել է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կանոնադրության եւ հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված ռեկտորի ընտրության ընթացակարգին համաձայն:

Նիստին մասնակցել է խորհրդի 20 անդամից 18-ը: Ռեկտորի ընտրությունը կայացել է մեկ փուլով, որի արդյունքում հոգաբարձուների խորհրդի անդամների գաղտնի քվեարկությամբ Տիգրան Սիմոնյանն ընտրվել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի ռեկտորի պաշտոնում:

«Տիգրան Սիմոնյանն արդեն շուրջ 1 տարի հանդիսանում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը եւ այս ընթացքում կարողացել է ապահովել բուհի բնականոն գործունեությունը: Հաշվի առնելով նաեւ նրա տեւական աշխատանքը ինստիտուտում, ոլորտում ունեցած գիտական ու մարզչական գործունեությունները՝ կարծում եմ, որ կկարողանա նաեւ այս աշխատանքը հաջողությամբ իրականացնել»,- ասել է Ժաննա Անդրեասյանը:

Տիգրան Սիմոնյանը շնորհակալություն է հայտնել վստահության համար՝ ընդգծելով, որ բուհն իր լիազորությունների շրջանակում կնպաստի ՀՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի ոլորտների 2024-2030 թվականների ռազմավարությամբ նախատեսված պետական ծրագրերի իրականացմանը: Այս համատեքստում նորընտիր ռեկտորը կարեւորել է բարձրագույն կրթության եւ գիտության ոլորտի բարեփոխումները, որոնք կնպաստեն նաեւ ՀՖԿՍՊԻ զարգացմանը:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորել եւ արդյունավետ աշխատանք է մաղթել Տիգրան Սիմոնյանին:

ՀՀ ԿԳՄՄՆ

հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

ՄԱՐԶԱԿԱՆ

ԳԱՐԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ՝ ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Հայաստանի ներկայացուցիչ Գարիկ Մելքոնյանը բրոնզե մեդալ է նվաճել Իտալիայի Թուրին քաղաքում ընթացող Համաշխարհային ուսանողական ձմեռային խաղերում: Նա երրորդ լավագույն արդյունքն է ցույց տվել պարադահուկավազքի 10 կմ ազատ ոճում՝ նվաճելով Հայաստանի առաջին մեդալն այդ խաղերում:

Գարիկ Մելքոնյանը խաղերին մասնակցել է ՀՀ դահուկային սպորտի հավաքականի գլխավոր մարզիչ Արթուր Միքայելյանի գլխավորությամբ:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում ընդգրկված են եւս 8 մարզիկներ, որոնք հանդես կգան գեղասահք, սնոուբորդ, լեռնադահուկային սպորտ եւ դահուկավազք եւ մարզաձեւերում: Պատվիրակության ղեկավարը Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիայի նախագահ Հովհաննես Գաբրիելյանն է:

Գեղասահքի անհատական պայքարում հանդես կգա Պյոտր Չիտիպախովյան, պարային զույգերի պայքարում՝ Կրիստինա Դոբրոսերդովա-Ալեսանդրո Բորտելո Պելեգրինի զույգը, լեռնադահուկային սպորտի մրցումներում Հայաստանը կներկայացնեն Հարություն Հարությունյանը եւ Ժիրայր Առաքելյանը, սնոուբորդում՝ Նորիկ Թադեւոսյանը եւ Դավիթ Հովհաննիսյանը, դահուկավազքում՝ Սպարտակ Ոսկանյանը:

Համաշխարհային ուսանողական ձմեռային խաղերում պայքարը կսկսեցին գեղասահորդները:

Համաշխարհային ուսանողական ձմեռային խաղերին այս տարի շուրջ 55 երկրի 3000 պատվիրակներ են մասնակցում: Խաղերը կտեւեն մինչեւ հունվարի 23-ը:

ԴԱՀՈՒԿԱՎԱԶՔԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՒԼԻՆ ԿՄԱՄՆԱԿՑԵՆՔ ԵՐԿՈՒ ՄԱՐԶԻԿՈՎ

Հայաստանի դահուկավազքի երկու ներկայացուցիչներ կմասնակցեն աշխարհի գավաթի խաղարկությանը:

Այս մասին ասել է Հայաստանի դահուկասպորտի ֆեդերացիայի նախագահ Գագիկ Սարգսյանը:

Ֆրանսիայում մեկնարկած դահուկավազքի աշխարհի գավաթի խաղարկության հերթական փուլին Հայաստանից կմասնակցեն երկրի բազմակի չեմպիոններ Միքայել Միքայելյանը եւ Կատյա Գալստյանը:

Ֆրանսիայում ընթացող աշխարհի գավաթի այս փուլը կեզրափակվի հունվարի 19-ին:

● *Հունվարի 29-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Կաբարե ռեստարտ» 16+ պներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ պարտավորություն ունի նպատակային ուսուցմամբ (պայմանագրային հիմունքներով գործուղված) ուսանողը:

Կանրինե Մելքոնյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նպատակային ուսուցմամբ ուսանող համարվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար պետությունը երաշխավորում է պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային կարգով անվճար բարձրագույն եւ հետբուհական կրթություն ստանալու իրավունք: Այս դեպքում մրցութային ընդունելությունն իրականացվում է ընդհանուր մրցույթից առանձնացված՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգի: Նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողի հետ կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում է նաեւ հետեւյալ պայմանը. ուսանողը ավարտելուց հետո առնվազն 3 տարի ժամկետով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով գործուղվում է աշխատելու ուղեգրող կազմակերպության նախատեսած վայրերում:

Այս պայմանը չկատարելու դեպքում շրջանավարտը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով եւ ժամկետներում պարտավոր է փոխհատուցել ուսումնառության տարիների համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրված ուսանողական նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցման չափի եւ պետական կրթաթոշակի չափի հանրագումարի կրկնապատիկը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ուսանողի տեղափոխությունը թույլատրվում է, եթե տեղափոխման պահին ուսումնառած ծրագրի եւ ընդունող ծրագրի բովանդակությունների տարբերությամբ պայմանավորված՝ առարկայական տարբերությունների թիվը չի գերազանցում 20 կրեդիտը, հակառակ պարագայում ուսանողին առաջարկվում է փոխադրվել ավելի ցածր կիսամյակում կամ այլ հարակից մասնագիտությամբ սովորելու, որի դեպքում առարկայական անհամապատասխանությունների նշված պահանջը բավարարվում է:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե որ օրվանից է նշանակվում կենսաթոշակը:

Վարսեր Եղիկյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ կենսաթոշակ նշանակվում է՝

կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու օրվանից (բայց ոչ շուտ, քան կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից), եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում,

բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում,

կերակրողի մահվան (օրենքով սահմանված դեպքում՝ անհայտ կորելու) օրվանից (բայց ոչ շուտ, քան կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից), եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է կերակրողի մահվան (օրենքով սահմանված դեպքում՝ անհայտ կորելու) օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում,

զինծառայությունից արձակվելու օրվանից, եթե սահմանված կարգով զինվորական ծառայությունից արձակված զինծառայողը դիմել է այդ օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշված ժամկետներից հետո դիմելու դեպքում կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի

Սա ոչ թե այն է, ինչ դուք մտածում եք, այլ պարզապես հետտոնական տոնածառ է, որն աղբամանը նետելու փոխարեն դրել են դրա դիմաց:

Հարգելի՛ քաղաքացիներ, մի՛ արեք այսպես. մարդիկ անցնելիս վախենում են: ☺

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-15 -20 -2 +2	
Կոտայքի լեռներ	-10 -15 -2 +2	
Կոտայքի նախալեռներ	-4 -9 0 +3	
Գեղարքունիք	-8 -11 -2 +1	
Լոռի	-4 -8 +7 +10	
Տավուշ	0 -2 +3 +6	
Արագածոտնի լեռներ	-15 -18 -2 +2	
Արագածոտնի նախալեռներ	-5 -9 -2 +2	

Արարատ	0 -5 +2 +4	
Արմավիր	-2 -5 +2 +4	
Վայոց ձորի լեռներ	-6 -9 +2 +4	
Վայոց ձորի նախալեռներ	-1 +2 +2 +5	
Սյունիքի հովիտներ	0 +3 +8 +10	
Սյունիքի նախալեռներ	0 +3 +7 +10	
ԼՂՀ	-2 -6 +8 +10	
Երեւան	-1 -3 0 +2	

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.1.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*